ՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՆԴՐԿԱՍՊՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ (1881—1917)

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

1881—1917 թթ. ժամանակաշրջանը բնութագրական է Անդրկասպյան երկրամաս բուրժուական հասարակական հարաբերությունների ներթափանցմամբ։ Դրա արդյունքը եղավ երկրամասում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի յուրօրինակ կենտրոնների՝ եկվոր բնակչությամբ քաղաքների առաջացումը, որոնց հետ հաղորդակցվելով, տեղական թուրքմեն բնակչությունը ծանոթանում էր ռուս, հայ, պարսիկ, ադրբեջանական և մյուս ժողովուրդների ազգային կուլտուրաներին և աստիճանաբար ներգրավվում իր համար նոր հասարակական կյանքի ուղի։ Այդ քաղաքներից մի քանիսը (Ասխաբադ, Մերվ, Կիզիլ-Արվատ, Կրասնովոդսկ) շուտով աճեցին և դարձան բավականին խոշոր։ Դրանց ռուս բնակչությունը հիմնականում բաղկացած էր զինվորական և քաղաքացիական ադմինիստրացիայի ներկայացուցիչներից, մտավորականությունից, պարսկականը՝ առևտրականներից և սեզոնային բանվորներից, հայկականը՝ առևտրականներից, արդյունաբերողներից, արհեստավորներից, բանվորներից և որոշ թվով մտավորականության ներկայացուցիչներից։ Հարկ է նկատել, որ չնայած «այլազգիների» նկատմամբ ցարական իշխանությունների ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունքին, երկրամասի հայության իրավական դրությունը, այնուամենայնիվ, բնակչության ոչ ռուս ազգային խմբերից գերադասելի էր։ Շնորհիվ տնտեսական, քաղաքական, կրոնական և հոգևոր այլ ձգտումներով ռուս բնակչության հետ ունեցած հայտնի մոտիկությանը, ինչպես նաև արևելյան ժողովուրդների միջավայրում կյանքի բազմադարյան փորձին, նրանց լեզուների ու բարքերի իմացությանը, հայկական բնակչությունը սկսեց կապող օղակի դեր կատարել տեղի ռուս և մահմեդական բնակչության միջև։ Բացի այդ, ոչ քրիստոնյա անձնավորությունների տնտեսական գործունեության հայտնի սահմանափակումները, հաստատված «Թուրքեստանյան երկրամասի կառավարման մասին» կանոնադրությամբ, հայկական բնակչության համար այդ առումով նշանակալի արտոնություններ էին ստեղծում, որ չէր կարող չանդրադառնալ նրա իրավական դրության վրա։ Արդեն երկրամասում իրենց բնակվելու ամենավաղ տարիներին հայ բնակիչները սկսեցին համառորեն ձգտել իրենց ազգային կյանքի կոորդինացմանը։ Միմյանցից լեզվական, ազգային, կրոնական և այլ տարբերություններով անջատված բնակչության կառավարման անհրաժեշտությունը վարչությանը ստիպում էր թույլատրել այսպես կոչված «ազգային ընկերությունների» կազմակերպումը։ Այդ ընկերությունների գլուխ կանգնած էին «ավագները», որոնք սովորաբար ընտրվում էին երեքամյա ժամկետով։ Ավագի թեկնածությունը ստանում էր վարչության նախնական հավանությունը։ Ազգային փոքրամասնությունների այդ ներկայացուցիչներին իշխանությունները ներգրավում էին քաղաքային տնտեսության ղեկավարման, կրթության և բժշկական օգնության զարգացման, հանցագործությունների նվազեցման, բարեգործական գործունեության և այլ հարցերին աջակցելու գործում։ Որպես կանոն, ավագ էին ընտրվում ռուսերենին տիրապետող ունևոր և հայտնի մարդիկ։ Տարբեր ժամանակներում հայկական ընկերության ավագներ են եղել Ասխաբադում՝ Ա. Տեր-Սարկիսովը, Ա. Ազագովը, Մերվում՝ Ասծատուրովը, Գ. Ասադովը, Կիզիլ-Արվատում՝ Ա. Գրիգորյանցը, Կուշկայում՝ Ա. Իշխանովը,

Բախտրդենում՝ Ա. Ակոպովը և շատ ուրիշներ[1]։ Եթե ավագի գործողություններն ինչ-որ կերպ հակասում էին իշխանությունների շահերին, ապա նրա հետ քիչ էին հաշվի նստում։ Այսպես, 1905 թ. մայիսի վերջին, «Ասխաբադ» թերթի հաղորդման համաձայն, հայկական ընկերության ավագը՝ քաղաքի «առաջին տնտերն ու վաճառականը», որը հանդգնել էր վարչության առաջ պաշտպանել մի հայկական ընտանիքի, «փողոցային լուտանքով» վռնդվել է, իսկ հետո ենթարկվել տնային կալանքի[2]։ Ժամանակի ընթացքում ցարական իշխանությունները որոշեցին ընդհանրապես վերացնել մի քանի ազգային փոքրամասնությունների պաշտոնական ներկայացուցչությունը, ինչի մասին 1909 թ. մայիսին կարգադրություն արեց Անդրկասպյան մարզի նոր պետ գեներալ-լեյտենանտ Եվրեինովը[3]։

Անդրկասպիայի հայերի կյանքում նկատելի դեր էր խաղում հայկական եկեղեցին։ Գործելով տեղի հայկական վերնախավի հետ ձեռք-ձեռքի տված, այն ակտիվորեն խառնվում էր մարզի հայ բնակչության կյանքի բոլոր ոլորտներին։ Ժամանակավոր առաջին հայկական եկեղեցիները հիմնվեցին արդեն XIX դ. 80-ական թվականներին՝ Ասխաբադում, Կիզիլ-Արվատում և Մերվում[4]։ Տեղական իշխանությունները հայ-գրիգորյան եկեղեցին համարելով ցարական ռեժիմին ընդդիմադիր ուժ, ամեն տեսակի խոչընդոտներ էին հարուցում մարզում հայկական եկեղեցիների կառուցմանը։ Դա արտացոլվել է 1890-ական թվականների սկզբին նրանց ձեռնարկած համարյա տասնամյա դատավեճում՝ Ասխաբադում, Կիզիլ-Արվատում և Մերվում հայկական մշտական եկեղեցիների կառուցման համար հողամասեր հատկացնելու շուրջ։ «Փոխանակ խրատելու հնազանդություն և, ամենից առաջ, հնազանդություն օրենքներին ու իշխանությունների կարգադրություններին...,—1891 թ. ներքին գործերի մինիստրությանը գրում էր մարզի պետ Կուրոպատկինը,— հայ հոգևորականությունն ինքն է անհնազանդության օրինակներ ցույց տալիս։ Այդ առումով օրինակ են ցույց տալիս նույնիսկ էջմիածնի Սինոդի անդամները. նրանցից երկուսը, ինչպես ինձ հայտնի է, հենց այդպիսի գործունեության համար են զրկվել իրենց բարձր կոչումից և արտաքսվել Կովկասից»[5]։ Տեղի հայկական եկեղեցու և Անդրկովկասի կապերը սահմանափակելու նպատակով Կուրոպատկինը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի Շամախիի հոգևոր թեմի տնօրինությունից Անդրկասպյան ծխերը հանվեն և հանձնվեն Աստրախանի հոգևոր թեմի տնօրինությանը։ 1899 թ. Շամախիի հոգևոր թեմի կողմից «Անդրկասպյան մարզի և Թուրքեստանյան երկրամասի գործակալ» նշանակված հոգևորական Տեր-Ոսկանովին մարզի վարչությունը սիստեմատիկաբար մանրախնդիր և անհիմն պահանջներ էր ներկայացնում։ Ի վերջո նա ընդհանրապես աքսորվեց մարզի սահմաններից։ Մարզի պետը հատկապես դեմ էր եկեղեցական-ծխական դպրոցներ բացելու մասին հայ հոգևորականության ունեցած իրավունքին[6]։ Չնայած դրան, հայկական ժամանակավոր եկեղեցիներն աստիճանաբար փոխարինվում էին մշտականներով, իսկ դրանց կից ստեղծված եկեղեցական ծխական դպրոցները՝ ուսումնարաններով։ 1910 թ. մարզում մշտապես գործող հայկական դպրոցներ կային Ասխաբադում, Կիզիլ-Արվատում, Մերվում, Կրասնովոդսկում և Թեջենում։ XX դ. երկրորդ տասնամյակի

---

1 Թուրքմենական ՍՍՀ պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ԹՍՍՀ ՊԿԱ), ֆ. Ի-1, ց. 2, գ. 580, թ. 3, գ. 254, թ. 253—255, գ. 3876, թ. 2, գ. 2688, թ. 60, գ. 3898, թ. 100, գ. 14458, թ. 199 և այլն, գ. 3868, թ. 161, գ. 3890, թ. 170, 257, գ. 3937, թ. 8, գ. 3973, թ 3 հակ։

2 «Асхабад», 29. V. 1905, с. 2—3.

3 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 3979, թ. 115—115 հակ.։

4 Նույն տեղում, թ. 4265, թ. 10—10 հակ., գ. 6719, թ. 5—6, գ. 7124, թ. 24, 25, գ. 4285, 4236, 2718։

5 Նույն տեղում, գ. 2718, թ. 22։

6 Նույն տեղում, թ. 1—23, գ. 2688, թ. 30, 31, 38, 60 և այլն, գ. 4236, թ. 13—14, գ. 10421, թ. 72, գ. 7238, թ. 3։

սկզբին Մերվի հայկական եկեղեցական-ծխական ուսումնարանում սովորում էին 63 տղա և 54 աղջիկ, Կրասնովոդսկի հայկական եկեղեցական-ծխական ուսումնարանում 1911 թ. կար 93 սովորող, իսկ Ասխաբադի հայկական եկեղեցական-ծխական ուսումնարանում, 1914 թ. տվյալներով, սովորում էր 220 երեխա։ Բացի այդ, Լուսիկ Մկրտչյանի մասնավոր դպրոցում սովորում էին 14 տղա և 17 աղջիկ[7]։ Հայկական եկեղեցին հայ ժողովրդի ունևոր խավերի շահերի արտահայտիչն էր և սերտորեն կապված էր հայկական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի հետ։ Մյուս կողմից, անցյալ դարի վերջին քառորդին, ընկնելով կառավարական բռնությունների ցանցի մեջ, որոնք ուղղված էին ոչ միայն եկեղեցու, այլև ամբողջ հայ ժողովրդի դեմ, հայկական եկեղեցին սկսեց էական մասնակցություն ունենալ հակաինքնակալական շարժմանը։ Եկեղեցին նշանակալի դեր էր խաղում հայկական դպրոցի պահպանման և զարգացման գործում։

Անդրկասպիայի հայերի ազգային կյանքում նշանակալից դեր էր խաղում XX դ. սկզբին Ասխաբադում Սուսաննա Մամիկոնյանի գլխավորությամբ ստեղծված «Հայ կանանց բարեգործական ընկերությունը», որը սկսեց գործել 1901 թ. փետրվարի 12-ին՝ մարզի պետ գեներալ Բոգոլյուբովի թույլտվությամբ։ Նրա կարծիքով այն «տեղի ռուս և հայ հասարակության մերձեցման միջոց» կծառայեր։ Թուրքեստանյան գեներալ-նահանգապետը, չբաժանելով այդ տեսակետը և վախենալով, որ «ընկերությունը պիտի հետապնդի իր ազգային նպատակները», կարգադրեց նրա նկատմամբ սահմանել խիստ ու չթուլացող հսկողություն և կանոնադրության առաջին իսկ խախտման դեպքում այն փակել[8]։ «Հայ կանանց բարեգործական ընկերությունը» նյութական և դրամական բազմատեսակ օգնություն էր ցույց տալիս կարիքավոր հայ ընտանիքներին։ Ընկերությունը հատկապես էական օգնություն էր ցույց տալիս քիչ ապահովված ընտանիքների երեխաներին։ 1915 թ. այն ուներ 99 իսկական անդամ, պահում էր մանկապարտեզ ու ենթազիմնազիա, որում սովորում էին 337 երկսեռ աշակերտներ. ընդ որում, նրանցից 158-ը սովորում էր անվճար, իսկ 100-ը մուծում էր սահմանված ուսումնավարձի կեսը։ Ընկերությունը կարիքավոր հայ ընտանիքներին նյութական և դրամական էական օգնություն ցույց տալու հետ մեկտեղ նրանց անվճար դեղեր էր տալիս, օգնում հայրենիք վերադառնալ ցանկացողներին։ Ընկերության դրամական մուտքերի հիմնական աղբյուրն էին անդամավճարները, ունևոր հայերի նվիրատվությունները, բարեգործական համերգները, ձեռագործների վաճառքը և այլն։ Ընկերությունն ամեն տարի իր գործունեության մասին «հաշվետվություններ» էր հրապարակում, որոնք լույս էին տեսնում Ասխաբադում և Բաքվում՝ տպագիր առանձնատիպերով։ Երկար տարիներ ընկերության անփոփոխ ղեկավարն էր Սուսաննա Մամիկոնյանը[9]։ 1906 թ. «Հայ կանանց բարեգործական ընկերությունն» իր գործունեությունը սկսեց նաև Մերվում[10]։

Անդրկասպիայի հայերի մշակութային կյանքի հետաքրքիր երևույթներից էր XIX դ. 90-ական թվականներին մարզի խոշոր քաղաքներում հայկական սիրողական թատրոնի առաջացումը։ Թատրոնի բեմում կարելի էր տեսնել հայերեն և ռուսերեն լեզուներով տրվող տարբեր պիեսների բեմադրություններ։ Տեղական թերթերում հաղորդվում էր ներկայացումների նպատակների մասին, գնահատվում էր դերասանների խաղը։ Անդրկովկասից Անդրկասպիա էին այցելում նաև հայ թատերական արվեստի գործիչներ, որոնց տեղի հայ բնակչությունը մեծ ջերմությամբ էր ընդունում։ Այսպես, 1908 թ. մարտին Ասխաբադ եկավ

---

7 «Обзор Закаспийской области за 1911 г.», (далее—ОЗО) Асхабад, 1915, с. 94.

8 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 7454, թ. 4, 20, 123—133։

9 Նույն տեղում, թ. 85, 117—117 հակ., 123, գ. 7463, թ. 21—23 հակ., գ. 7478, թ. 35, 37, 70—72 հակ., թ. 77—79 հակ. և այլն, «Асхабад», 21. I. 1907, 29. I. 1908 և այլն։

10 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 7503, թ. 11—12 հակ.։

հայ դերասանների խումբը՝ հայտնի դերասան Հ. Աբելյանի գեկավարությամբ[11]։

Հիմնավորվելով Անդրկասպյան մարզում, հայ բնակչությունը պահպանեց հոգևոր կապը հայրենիքի, իր ժողովրդի հետ։ Ռուսական կայսրությունում և նրա սահմաններից դուրս հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող ամեն մի փոքր ինչ կարևոր երևույթ կենդանի արձագանք էր գտնում մարզի հայերի շրջանում։ XIX դ. 90-ական թվականներին Թուրքիայում հայերի հալածանքների ու կոտորածների պատճառով Անդրկովկաս անցան մեծ թվով արևմտահայ փախստականներ։ Նրանցից ոմանք տեղափոխվեցին Անդրկասպիա։ Այսպես, օրինակ, 1897 թ. սկզբին Մերվում «լրտեսական գործունեության» մեղադրանքով ձերբակալվեցին երեք հայեր, որոնք պարզապես արևմտահայ փախստականներ էին և այդտեղ էին եկել ապաստան գտնելու հույսով[12]։ Հայ բնակչության, Ռուսաստանի և մյուս երկրների առաջադեմ հասարակայնության արդարացի զայրույթի ճնշման տակ ցարական կառավարությունը ստիպված էր հաշվի նստել հայ փախստականների պրոբլեմի հետ։ 1897 թ. Անդրկասպիայում հրապարակվեց մարզի պետի հրամանը՝ «Թուրքիայից մեր սահմանները փախած հայերի վիճակը թեթևացնելու համար կայսրությունում ամենուր հանգանակությունների հավաքման» ցարի թույլտվության մասին[13]։ 1898 թ. վերջին մարզի պետը հրամայեց ուշադրություն չդարձնել գրասենյակ ուղղված այն մատնագրին, ըստ որի Կիզիլ-Արվատի հայերը նյութական օգնություն էին ցույց տալիս Թուրքիայում հայերի պայքարին[14]։ 1909 թ. Թուրքիայից եկած 30 հազար հայ գաղթականների ռուսական կառավարությունը թույլատրեց բնակվել կայսրության սահմաններում[15]։

Մարզի հայ բնակչության հասարակական գործունեությունը չէր սահմանափակվում ազգային կյանքի շրջանակներով։ Անդրկասպիայի հայերն ակտիվորեն մասնակցում էին նաև ազգամիջյան հասարակական կապերի զարգացմանը։ Անդրկասպիայի քաղաքային կյանքի կարևորագույն առանձնահատկություններից մեկը լեզվի պրոբլեմն էր։ Լեզվական տարբերությունները բաժանում էին մարզի ռուս, թուրքմեն, պարսիկ, հայ և այլ բնակչությանը։ Այդ պայմաններում, հատկապես երկրամասը Ռուսաստանին միացնելու առաջին տասնամյակներին, ինչպես քաղաքների, այնպես էլ գյուղական վայրերի բնակչության հետ ռուսական վարչության հարաբերությունների միջնորդավորման ֆունկցիան հաճախ կատարում էին հայերը։ Ռուսերենին լավ տիրապետող անձնավորությունների թիվը հայերի մոտ ավելի էր, քան ոչ ռուս մյուս ազգերի մոտ։ Բացի այդ, հայերից շատերը գիտեին ֆարսերեն և ադրբեջաներեն, հասկանում էին թուրքմեներենը, որը նրանց հնարավորություն էր տալիս հանդես գալու թարգմանիչների դերում։ Առանձին հայեր ռուսական ղորքերին կից թարգմանիչներ էին արդեն այն ժամանակ, երբ նրանք նոր էին մուտք գործում Թուրքմենիստան։ Նրանց այդ դերը պահպանվեց նաև հետագա տարիներին[16]։

1890 թ. Կուրոպատկինն ինքը խոստովանում էր, որ «ռազմաժողովրդական կառավարչության պաշտոնյաներին կից թարգմանիչները ևս գերազանցապես հայեր են»[17]։

---

11 Նույն տեղում, գ. 7229, թ. 16—18 հակ., 50—52 հակ., 92, գ. 7265, թ. 1, «Асхабад», 30. IV. 1905, 1. III. 1908 և այլն։

12 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 15993, թ. 1—24։

13 Նույն տեղում, գ. 3849, թ. 4։

14 Նույն տեղում, գ. 10556, թ. 3—5։

15 «Восточный вопрос во внешней политике России (конец XVIII—начало XX вв.)», М., 1978, с. 368.

16 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 3016, գ. 3231, թ. 12, գ. 3446, թ. 5, գ. 3868, թ. 148, գ. 5006, թ. 43 և այլն։

17 Նույն տեղում, գ. 7747, թ. 5։

Անդրկասպիայում պետական, ազգամիջյան շփումների միջոցի դեր կատարող ռուսերենի իմացությունն էապես ընդլայնում էր ոչ ռուս ազգությանը պատկանող վերաբնակչի սոցիալական հնարավորությունները։ Այդ իսկ պատճառով էլ հայ բնակչությունը համառորեն ձգտում էր ապահովել իր երեխաների համար ռուսերենի ուսուցումը։ Բացի այդ, տեղի հայկական դպրոցները, անտարակույս, չէին կարող ապահովել մարզի հայ բնակչության կրթության պահանջը։ Մարզում XIX դ. 80-ական թվականներին ստեղծված արդեն առաջին ռուսական դպրոցներում և ուսումնարաններում ոչ ռուս ազգությանը պատկանող երեխաների թվաքանակի համեմատությամբ հայերի տոկոսն առավել բարձր էր[18]։ Մարզի բնակչությունը համառորեն ձգտում էր գործող ուսումնական հաստատությունների ընդլայնմանն ու նորերի բացմանը։ Բացմաթիվ միշնորդագրերն ու խնդրագրերը, նվիրատվություններն ու դրամական հանգանակությունները վարչությանը ստիպեցին ժամանակի ընթացքում մարզի բոլոր խոշոր քաղաքներում բացել միջնակարգ ուսումնական հաստատություններ։ Դրանում նկատելի մասնակցություն ունեցավ նաև հայ բնակչությունը, մասնավորապես վաճառականությունը[19]։ 1895 թ. Կուրոպատկինը, ռազմական մինիստրության առաջ միջնորդելով Ասխաբադում ենթագիմնազիա բացելու մասին, նշում էր, որ կրթության կարիք են զգում ոչ միայն զինվորականների և վարչական պաշտոնյաների, այլև տեղական վաճառականների ու արդյունաբերողների երեխաները[20]։ 1904 թ. տվյալներով Ասխաբադի արական գիմնազիայում կրթվում էին 433 սովորողներ, որոնցից 242-ը ռուս էին, 118-ը՝ հայ, 24-ը՝ հրեա, 23-ը՝ պարսիկ և ադրբեջանցի, 14-ը՝ լեհ, 4-ը՝ վրացի, իսկ 8-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ։ Ասխաբադի իգական գիմնազիայում կրթվում էին 397 գիմնազիստուհիներ, որոնցից 316-ը ռուս էին, 48-ը՝ հայ, 17-ը՝ հրեա, իսկ 16-ը՝ այլ ազգերի ներկայացուցչուհիներ։ Մարզի 37 սկզբնական դպրոցներում (այդ թվում 10 ռուս-թուրքմենական դպրոցներում) այդ ժամանակ սովորում էին 1780 ռուս, 162 թուրքմեն, 119 հայ, 58 գերմանացի, 31 կիրգիզ, 16 հրեա, 10 լեհ, 1 վրացի և այլ ազգերի 12 երեխաներ[21]։

Ուսումնական հաստատություններ էին բացվում նաև մարզի մյուս քաղաքներում՝ Մերվում, Կրասնովոդսկում, Կիզիլ-Արվատում[22]։ XX դ. երկրորդ տասնամյակի կեսերին Ասխաբադի արական գիմնազիայում կային 520 սովորողներ. աղբյուրներում նրանցից հիշատակված են 369 ռուս, 104 հայ, 24 հրեա և 23 մահմեդական։ Ասխաբադի իգական գիմնազիան ուներ 556 սովորող, որոնցից 434-ը ռուս էին, 85-ը՝ հայ, 29-ը՝ հրեա և 8-ը՝ մահմեդական։ 1914 թ. տվյալներով Ասխաբադի ստորին և սկզբնական դպրոցներում սովորում էին 1815 ռուս, 557 հայ և 265 մահմեդական երեխաներ[23]։ Ռուսական ուսումնական հաստատություններում հանդիպում էին հայ դասատուներ[24]։

Անդրկասպիայում քաղաքային կյանքի արագ զարգացումը հանգեցնում էր տարբեր ընկերությունների առաջացմանը։ Բնույթով բուրժուական այդ ընկերությունները նպատակ ունեին զարգացնել կուլտուրան, լուսավորությունը, բարեգործական գործունեությունը և այլն։ 1889 թ. Ասխաբադում ձևավորվեց «Հասարակական ժողովը», որի կազմակերպմանը մասնակցեցին գլխավորապես հայ և ռուս բնակչության ներկայացուցիչները։ Հիմնադիրների մեջ էին հայտնի հայ տնատերեր և վաճառականներ Ն. Տեր-Մկրտիչևը, Խ. Մնացականովը, Ռ. Կաչկաչևը, Օ. Չերքեզովը, Ն. Ղուկասովը, Տեր-Սարկիսովը, Տեր-

---

18 Նույն տեղում, գ. 7124, թ. 4, 25—26, գ. 7150, թ. 1—4։

19 Նույն տեղում, գ. 7140, թ. 229, գ. 7227, թ. 1—5, գ. 7273, թ. 30 հակ., 79—80։

20 Նույն տեղում, գ. 7140, թ. 23, 33, 49, 247—250 և այլն։

21 «ОЗО за 1904 г», Асхабад, 1905, с. 171—176.

22 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 7404, թ. 50, 63, գ. 7273, թ. 1—15, 30, 79—80, գ. 7307, թ. 3—4, 5, 17—18, գ. 7294, թ. 1—3 և այլն։

23 Նույն տեղում, գ. 7835, թ. 691, գ. 2618, թ. 97 հակ., ֆ. Ի-116, ց. 1, գ. 32, թ. 7—8։

24 Նույն տեղում, ց. 1, թ. 1—19։

Ստեպանովը և ուրիշներ։ «Հասարակական ժողովի» նպատակն էր «իր անդամներին ու նրանց ընտանիքներին հնարավորություն տալ ազատ ժամանակն անցկացնել հարմարավետ ու օգուտով»։ Այդ նպատակով կազմակերպվում էին պարահանդեսներ, դիմակահանդեսներ, համերգներ ու ներկայացումներ, բաժանորդագրվում էին թերթեր, ամսագրեր ու գրքեր. հրապարակային դասախոսություններ կարդալու համար հրավիրվում էին մասնագետներ[25]։ Ասխաբադի «Հասարակական ժողովում» հաճախ կարելի էր դիտել հայկական գրական, երաժշտական-վոկալ դրամատիկ ներկայացումներ[26]։ Մարզի վարչության վկայությամբ, հետագա տարիներին «Հասարակական ժողովին» հայերի հաճախումներն ավելի են ուժեղացել։ Մի փաստաթղթում տեղական ոստիկանական աստիճանավորն այդ «ժողովն» անվանել է հայկական, հենվելով այն բանի վրա, որ նրա անդամների մեծ մասը հայեր են[27]։

Ասխաբադի մի քանի հայտնի հայեր հանդիսանում էին ռուսական զինվորական և վարչական աստիճանավորների ստեղծած «Անդրկասպյան բարեգործական ընկերության» անդամներ։ Ընկերությունը կրում էր փակ, արիստոկրատական բնույթ և ընդգրկում էր անձանց խիստ նեղ շրջանակ։ 1896—1915 թթ. նրա անդամների քանակը 16-ից հասել էր 57 մարդու[28]։ Հայերը մասնակցում էին նաև մարզում կրթության և լուսավորության զարգացմանը նպաստող ընկերությունների ստեղծմանն ու գործունեությանը։ Դրանցից էին «Աղքատ սովորողներին օգնող ընկերությունը» և «Առևտրական կրթության տարածման ընկերությունն» Ասխաբադում, «Երաժշտական-դրամատիկական ընկերությունը» և «Միջնակարգ կրթության տարածման ընկերությունը» Կրասնովոդսկում, «Կրթության ընկերությունը» Կիզիլ-Արվատում և այլն։ Հայ բնակչությունն ամբողջությամբ, ինչպես նաև առանձին անհատներ զգալի ջանքեր ներդրեցին գրադարանների, ընթերցարանների, «Ընթերցանություն սիրողների ընկերությունների» բացման գործում, աջակցում էին առողջապահության զարգացմանը[29]։

Հայ բնակչության դերը հատկապես ակտիվ էր Անդրկասպիայում տարբեր տեսակի առևտրական ու առևտրաարդյունաբերական ընկերությունների կազմակերպման ու գործունեության մեջ։ Այսպես, XIX դ. վերջին Մերվում հայ առևտրականների ամենաակտիվ մասնակցությամբ ստեղծվեց Միջին Ասիայում առաջին՝ «Մերվի փոխադարձ վարկի ընկերությունը»։ Այդպիսի ընկերություն բացվեց նաև Ասխաբադում։ Հետագա տարիներին ևս այդ ընկերություններում հայ վաճառականների դերը միանգամայն էական էր։ Օրինակ, 1916 թ. «Ասխաբադի փոխադարձ վարկի ընկերության 250 անդամների $^1/_3$-ը հայ էր։ Ընկերության մեջ էին մտնում Տեր-Մկրտիչները, Հախնազարովները, Տեր-Ղուկասովը, Բ. Աթայանցը, Հախումովը, Տեր-Տերյանցը և այլ հայ վաճառականներ ու արդյունաբերողներ[30]։ 1915 թ. Ասխաբադի մի շարք առևտրականներ՝ Բ. Աթայանցը, Ն. Տեր-Մկրտիչևը, Ա. Ներսեսյանցը, Ա. Կևորկովը և ուրիշներ մտան «Առևտրական կոմիտեի» հիմնադիր կազմի մեջ, որը, վարչության խոսքերով ասած, ձգտում էր «մոնոպոլացնել մարզում ներքին ու արտաքին առևտուրը»[31]։

Հայ վաճառականությունը մասնակցում էր նաև գյուղատնտեսության ոլորտում գործող ընկերությունների կազմակերպմանը և գործունեությանը։

---

25 Նույն տեղում, ց. 2, գ. 5239, թ. 11։

26 «ОЗО за 1890—1896 гг.», Асхабад, 1897 с. 528, «Асхабад», 19. VII. 1903, с. 1.

27 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 3523, թ. 11, 16, 18։

28 Նույն տեղում, գ. 7433, թ. 9—10, գ. 7487, թ. 57։

29 Նույն տեղում, գ. 7422, թ. 2—7, գ. 7444, թ. 5—11 հակ., 14, գ. 7478, թ. 2, 164—164 հակ., գ. 7482, թ. 142—143 հակ., գ. 7326, թ. 1—11, գ. 7487, թ. 179, 185, գ. 7121, թ. 10—14 հակ., 20, 38, 145, գ. 7154, թ. 1, 9 և այլն։

30 Նույն տեղում, գ. 7445, թ. 5—7, 35—37, ֆ Ի-2, ց. 1, գ. 233, թ. 142—152։

31 Նույն տեղում, ֆ. Ի-1, ց. 2, գ. 7491, թ. 86—88, 103—107 հակ.։

Մերվի հայ վաճառականներ Կ. Ստղաթելովը, եղբայրներ Մ. և Դ. Մկրտիչևները, Ս. Սարուխանովը, Կ. Ղարիբովը, Ն. Անտոնովը և ուրիշներ 1900 թ. հիմնադրեցին «Գյուղատնտեսական արդյունաբերության և առևտրի ընկերությունը», որը հետագայում վերակառուցվեց 50000 ռ. դրամագլխով ակցիոներական ընկերության։ Թեջենում 1916 թ. գործում էր «Թեջենի գյուղատնտեսական ընկերությունը», որի կազմի մեջ էին մտնում տեղի հայ վաճառականներ ու արդյունաբերողներ Մ. Կոստանդովը, Ն. Տեր-Օհանովը, Ա. Օհանովը և Լ. Ասրյանցը[32]։

Տեղական վարչությունը լայնորեն օգտագործում էր հայ վաճառականների շուկայի իմացությունն ու առևտրական փորձը։ Շատ հայ վաճառականներ ու արդյունաբերողներ մասնակցում էին պետական ու մասնավոր տարբեր հիմնարկությունների՝ բանկերի, հարկային հիմնարկների գործունեությանը[33]։

Տնտեսական տարբեր հիմնարկությունների շրջանակներում հայերի գործունեությունը ոչ քիչ չափով նպաստում էր մարզի բնակչության մեջ առևտրական, արդյունաբերական և արհեստագործական գործունեության ունակությունների և, ընդհանրապես, տնտեսագիտական գիտելիքների տարածմանը։ Մյուս կողմից, լինելով ցարական ռեժիմի հավատարիմ դաշնակիցը, Անդրկասպիայի հայ բուրժուազիան այդ հիմնարկություններն օգտագործում էր մարզի աշխատավորների (այդ թվում և հայ) ավելի սիստեմատիկ շահագործման համար։

Ռուսաստանին Թուրքմենիայի միացման կարևորագույն արդյունքը եղան հեղափոխական գաղափարների ներթափանցումը մարզ և հեղափոխական շարժման զարգացումը։ Անդրկասպիայի հեղափոխական շարժման պատմության հատկապես սկզբնական ժամանակաշրջանում մեծ դեր խաղացին Անդրկովկասի, ամենից առաջ Բաքվի, բոլշևիկյան կազմակերպությունները։ Իշխանությունների կողմից աքսորված կամ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի կողմից մարզ ուղարկված ռուս, հայ, վրացի և այլ սոցիալ-դեմոկրատները սոցիալ-դեմոկրատական խմբերի ու կազմակերպությունների առաջին կազմակերպիչներն էին։ Կովկասից բերվում էին անլեգալ գրականություն, գրքույկներ, թռուցիկներ, տպատառեր և ընդհատակյա տպարանների այլ սարքավորումներ[34]։

Մինչև 1900 թ. Անդրկասպիայում հեղափոխական շարժումները, հեղափոխական կազմակերպությունների բացակայության պատճառով, կրում էին գերազանցապես մեկուսի, տարերային բնույթ։ Այդ ժամանակաշրջանում հեղափոխական շարժումներին հայ բնակչության մասնակցությունը սահմանափակվում էր նրա առանձին շերտերի դիպվածային հակակառավարական ելույթներով։ Այսպես, դեռևս 1881 թ. դինվորների շրջանում միապետության դեմ պրոպագանդայի համար ձերբակալվել էր երկաթուղու վարչության թարգմանիչ Բահրամովը։ 1885 թ. Մերվում հայ վաճառականներ Մկրտիչևի և Բոգատուրովի կրպակներում հայտնաբերվեցին գրաքննության կողմից արգելված տպագիր հրատարակություններ, ինչպես և «Մշակ» թերթի օրինակը։ Բոգատուրովը մինչ այդ պատասխանատվության էր ենթարկվել «հայկական գաղտնի հեղափոխական ընկերության մասին» գործով։ 1898 թ. Կիզիլ-Արվատում հայտնաբերվեց Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ հայերի պայքարին օժանդակող հայ առևտրականների խումբ[35]։ Հայ ազգային գոր-

---

32 Նույն տեղում, գ. 7452, թ. 23, 31, 41, 48 և այլն, գ. 7492, թ. 13, 20, 23—24։

33 Նույն տեղում, ֆ. Ի-2, ց. 1, գ. 16, թ. 4—13, գ. 29, թ. 3—7, 20, գ. 99, թ. 1—13 և այլն, գ. 223, թ. 144, ֆ. Ի-4, ց. 1, գ. 1, թ. 77, ֆ. Ի-1, ց. 2, գ. 6650, թ. 1—4, հակ., գ. 14478, թ. 142—143, 155—156, 172, 174—175, 191—192, ֆ. Ի-1, ց. 1, գ. 58, թ. 128—504, գ. 60, թ. 151—174 և այլն։

34 «История Туркменской ССР», т. I, кн. 2, Ашхабад, 1957, с. 200.

35 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-97, ց. 1, գ. 43, թ. 2, ֆ. Ի-1, ց. 2, գ. 136, թ. 6, գ. 10421, թ. 84, գ. 10556, թ. 3—5։

ծիլներն Անդրկասպիայում, ի դեմս խոշոր ու միջին հայ բուրժուազիայի, ունեին բավականին ամուր սոցիալական բազա և հետագա տարիներին մարզի հայ բնակչության մեջ ծավալեցին ակտիվ գործունեություն։

1890-ական թվականների կեսերին առևտրական հիմնարկների տերերի և գործակատարների միջև տարաձայնություններ ծագեցին կիրակի օրերին աշխատանքի սահմանափակման հարցի շուրջ։ 1897 թ. մարտին ասխաբադյան գործակատարները, ճնշող մեծամասնությամբ հայեր, մարզի պետին համապատասխան խնդրագիր ներկայացրին. համանման բողոքով իշխանություններին դիմեցին նաև Կրասնովոդսկի հայ գործակատարները[36]։ Այդ ժամանակաշրջանում սոցիալական դժգոհությունն արտահայտվում էր հանրագրերի, բողոքների և գանգատների ձևով։

XX դ. սկզբին Ռուսաստանն ու Անդրկովկասն ընդգրկած հեղափոխական շարժման վերելքը դարձավ մարզում հեղափոխական շարժման զարգացման հզոր խթան։ Կազմակերպվում են հեղափոխականների ընդհատակյա առաջին խմբերը, տեղի են ունենում բանվորների ու դեյխանների մի շարք ելույթներ[37]։ Դեյխանական ելույթներից ամենախոշորը տեղի ունեցավ Թեջենի գավառի Սերխանի պրիստավությունում։ Դրանում աչքի ընկնող դեր խաղաց Բ. Կոստանդովը, որը դեյխաններին բացատրում էր իշխանությունների կողմից նրանց հողաջրային իրավունքների սահմանափակման անօրինականությունը։ Պահնորդության փաստաթղթերում ասվում է, որ «հայ Բոդդան Կոստանդովը մարզում բնակություն է հաստատել վաղուց և վարչությանը հայտնի է որպես միանգամայն անբարեհույս մարդ»[38]։

Անդրկասպիայում սոցիալ-դեմոկրատական առաջին խմբերն առաջացան 1903—1904 թթ.։ ՌՍԴԲԿ Ասխաբադի կազմակերպությունը կազմվեց 1904 թ. աշնանը՝ լեհ Լ. Ստաբրովսկու միավորած խմբակների հիման վրա։ Լ. Ստաբրովսկու խմբակը գերազանցապես բաղկացած էր ծառայողներից ու սովորող երիտասարդությունից, որոնց մեջ կային շատ հայեր։ Հետագայում Լ. Ստաբրովսկու, Ա. Խաչիյանցի և մյուսների գործով դատավարության ժամանակ վկաներից մեկը ցուցմունք տվեց, որ «Լ. Ստաբրովսկին... շծանոթանալով իր ծառայակիցների հետ, ծանոթություն էր հաստատում միայն հայերի հետ»։ Սկզբնական շրջանում խմբակում գերակշռում էին էսէռական գաղափարները, բայց բաքվեցի փորձված բոլշևիկ Ա. Խաչիյանցի Ասխաբադ գալուց հետո կազմակերպությունը կանգնեց սոցիալ-դեմոկրատական դիրքերի վրա[39]։ Ա. Խաչիյանցի բնակարանում նա և Լ. Ստաբրովսկին պարապմունքներ էին անցկացնում սոցիալ-դեմոկրատական հարցերի շուրջը, կազմակերպության անդամներին ծանոթացնում էին մարքսիստական գրականությանը[40]։

Իր գործունեության արդեն առաջին շրջանում Ասխաբադի սոցիալ-դեմոկրատական խմբակն ազգային հարցի վերաբերյալ ճիշտ դիրք էր բռնել։ «Մեզ՝ սոցիալիստներիս,— ասվում էր Ասխաբադի հեղափոխականների թռուցիկներից մեկում,— բոլոր ժողովուրդների աշխատավորների շահերը միանման

---

36 Նույն տեղում, ֆ. 1-1, ց. 2, գ. 14489, թ. 1—9։

37 «История Туркменской ССР», т. I, кн. 2, с. 201.

38 «Проникновение революционных идей и развитие революционного движения в Туркменистане в 1881—1907 гг.». Сборник архивных документов и материалов (далее—«Революционное движение в Туркменистане в 1881—1907 гг.»), Ашхабад. 1962, с. 11—12, 38.

39 А. А. Росляков, Революционное движение и социал-демократические организации в Туркменистане в дооктябрьский период (1900—1917), Ашхабад, 1957, с. 41—42; А. Мелкумов, Материалы революционного движения в Туркмении, Ашхабад, 1924, с. 6, «Очерки истории Коммунистической партии Туркменистана», Ашхабад, 1961, с. 28.

40 «Начало революционного движения в Туркмении в 1900—1905 гг.», кн. 2, Ашхабад-Москва, 1946, с. 55, 58, 61.

թանկ են։ Մենք պետք է բողոքարկենք և՛ ռուսների, և՛ հայերի, և՛ վրացիների, և՛ բաքվեցիների, և՛ պարսիկների ճնշումը։ Առանց ազգության ու հավատի տարբերությունների՝ բոլոր ճնշվածներին մենք պետք է ըստ հնարավորության օգնենք և՛ խոսքով, և՛ գործով։ Բայց մեզ հատկապես թանկ են հարուստ կապիտալիստների համար հարկադրաբար աշխատող աշխատավոր բանվոր դասակարգի շահերը»[41]։

1905—1907 թթ. հեղափոխությունն Անդրկասպիայում լայն արձագանք գտավ։ Անդրկասպիայի հայերը ռուսների, վրացիների, հրեաների և մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ ակտիվորեն մասնակցեցին այդ ժամանակաշրջանի հեղափոխական ելույթներին։ «Ներքին նահանգներում և Անդրկովկասում հուզումներն ու անկարգությունները հատկապես նպաստեցին այն բանին, որ Անդրկասպյան մարզը, հատկապես Ասխաբադը, աստիճանաբար վերածվեն Բաքվի հանցագործ (հեղափոխական—Վ. Գ.) ընկերությունների հետ մշտական և ակներևաբար սիստեմատիկ շփումների մեջ գտնվող հայ, հրեա և մասամբ ռուս հեղափոխականների գործունեության խոշոր և անպայման վտանգավոր կենտրոնի»[42],— ասված է ռազմական մինիստրին 1905 թ. հուլիսի 16-ին Թուրքեստանի գեներալ-նահանգապետի հղած զեկուցագրում։

Լայնորեն տարածվում էին հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով կովկասյան անլեգալ հրատարակությունները։ Դրանց տարածմանն ակտիվորեն մասնակցում էին հայ հեղափոխականները։ Այսպես, օրինակ, 1905 թ. մայիսին Ասխաբադում մատնագրի պատճառով ձերբակալվեցին Համայակ ու Հովհաննես Մեքիև եղբայրները և Արսեն Հայրապետյանցը, որոնց մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերվեց ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով հրատարակված հակակառավարական բովանդակությամբ 1132 օրինակ թռուցիկ ու գրքույկ։ ՌՍԴԲԿ Ասխաբադի կոմիտեն այդ առթիվ տարածեց հայտարարություն, որն անարգում էր մատնությունը և կոչ անում տապալել ինքնակալությունը[43]։ 1905 թ. հուլիսի 4-ին Թուրքմենիստանում տեղի ունեցավ առաջին մասսայական քաղաքական ցույցը. դրան առիթ ծառայեց Ասխաբադի սոցիալ-դեմոկրատների դեռ բոլորովին երիտասարդ ղեկավար Լ. Ստաբրովսկու մահը բանտում։ Լ. Ստաբրովսկու թաղմանը մասնակցեցին ոչ պակաս 500 հայ ընտանիքներ և բազմաթիվ հայ երիտասարդներ[44]։ Այդ ցույցն իշխանություններին անակնկալի բերեց։ Գեներալ-նահանգապետ Տևյաշովն այն անվանեց «իշխանության... բացահայտ և անպատիժ անվանարկում»։ Փորձելով հանգստացնել գեներալ-նահանգապետին, մարզի պետ Դանիլովիչը ձգտում էր տեղի սոցիալ-դեմոկրատների գործունեությունը ներկայացնել մասսայական բանվորական շարժումից կտրված։ «Երիտասարդ... հայերի, հրեաների ցույցերը,— գրում էր նա,— երկաթուղային բանվորների շարժման հետ ոչ մի ընդհանուր բան չունեն. վերջինները խնդրում են տարբեր տեսակի արտոնություններ և աշխատավարձի բարձրացում, իսկ առաջին կուսակցությունը գործում է Բաքվի հեղափոխական կոմիտեի և ներքին Ռուսաստանի ու Կովկասի նույնպիսի կոմիտեների ցուցումով։ Վերջին ժամանակներս հատկապես շատ են եկել Բաքվի հայեր»։ Դրա հետ միասին վստահություն հայտնելով, որ «օրեցօր հակակառավարական ցույցերն ու անկարգությունները պետք է ուժեղանան» և գեներալ-նահանգապետին նախազգուշացնելով,

---

41 Նույն տեղում, էջ 11։

42 «Революционное движение в Туркменистане в 1881—1907 гг.», с. 97.

43 Նույն տեղում, էջ 69—70, 78, 81—82 (ՌՍԴԲԿ Ասխաբադի կոմիտեն կազմակերպվել էր 1905 թ. մարտին («Очерки истории Коммунистической партии Туркменистана», с. 25):

44 «Революционное движение в Туркменистане в 1881—1907 гг.», с. 87—88, 91.

որ «քաղաքի հայկական ու մահմեդական ամբողջ բնակչությունը գլխովին դինված է Կովկասում ձևաքբերված հրաձիգ զենքով», Դանիլովիչը թախանձագին խնդրում էր մարդից աքսորել ակտիվ հեղափոխական-պրոպագանդիստներին և հեղափոխականներին հետևելու համար կազմակերպել հատուկ հետախուզական բյուրո[45]։ Հուլիսյան ցույցից հետո Անդրկասպյան մարզը հայտարարվեց ուժեղացված պահպանության դրության մեջ, սկսվեցին ձերբակալություններն ու աքսորները։

1905 թ. համառուսաստանյան քաղաքական գործադուլի ազդեցության տակ Թուրքմենիստանում ծավալվեց երկաթուղայիններ գործադուլային շարժումը։ Բռնկված համահեղափոխական վերելքով՝ պայքարի մեջ մտան դպրոցների ու գիմնազիաների սովորողները, գործակատարները և մանր առևտրականները, որոնց մեջ կային շատ հայեր։ Մարդի պետին ուղղված անանուն մատնագրում հատկապես նշվում էր «բունտարարների ղեկավար» Նեստերովի և «հայկական կոմիտեից մարդու» դերը։ «Վերջինս,— մատնագրի հեղինակի խոսքերով ասած,— բոլոր հայերին նոյեմբերի 17-ին հավաքել է հայկական ժողովի (խոսքը «Ասխաբադի հասարակական ժողովի» մասին է— Վ. Գ.), որտեղ շատ վատ է արտահայտվել մեր կայսեր հասցեին...։ Հայկական ընկերությունը հավաքելով 1000 ռուբլի, այն բաժանել է պետական ճանապարհների և փոստի շարժումը կասեցնող գործադուլավորներին՝ խոստանալով նրանց օգնել դրամով, հրացաններով և ռումբերով...»[46]։

Բանվորական շարժումից մի կողմ չմնացին անգամ հայ առևտրականները։ Կրասնովոդսկում, օրինակ, գավառային պետի հաղորդման համաձայն հայ առևտրականները գործադուլը երկարաձգելու համար նյութական օգնություն են առաջարկել գործադուլավորներին[47]։

Ռեակցիայի հարձակումով իշխանությունները ձեռնամուխ եղան բնակչությունից զենքի անհապաղ բռնագրավմանը։ Կարգադրվել էր խուզարկությունների ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել «հրեաներին, հայերին և երկաթուղային ծառայողներին»։ Խուզարկությունները ցույց տվեցին, որ շատ հայեր ունեին զենք ու զինամթերք, որի համար ենթարկվեցին տուգանքների ու ձերբակալությունների[48]։ 1907 թ. հունիսի 3-ի հակահեղափոխական հեղաշրջումը նշանավորեց առաջին համառուսաստանյան հեղափոխության ավարտը։ Զգվեցին ռեակցիայի, արյունոտ տեռորի և ոստիկանական կամայականությունների մռայլ տարիները։ Այդ ժամանակաշրջանի հեղափոխական աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էր Ա. Զուրաբովը[49]։ Նա 1905 թ. մտնում էր ՌՍԴԲԿ Տաշքենդի խմբի մեջ։ Այդ ժամանակ ՌՍԴԲԿ կովկասյան միության միջոցով հաստատվեց խմբի կապը «Պրոլետարի» թերթի խմբագրության հետ[50]։ 1906 թ. մարտին Ա. Զուրաբովը Ասխաբադի հեծանվորդների

---

45 Նույն տեղում, էջ 90, 95։

46 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 3523, թ. 11, 16, 18։

47 Նույն տեղում, ֆ. Ի-17, ց. 1, գ. 366, թ. 416—419։

48 Նույն տեղում, ֆ. Ի-1, ց. 2, գ. 7599, թ. 11, 24—26, գ. 258, թ. 23—24, 52, 54, 92, 256 և այլն, ֆ. Ի-15, ց. 1, գ. 135, թ. 2—3, «Асхабад», 15. III, 1906, с. 2 և այլն։

49 «Հիշյալ Զուրաբովը,— ասված է 1905 թ. փետրվարի 4-ին Թուրքմենիստանի գեներալ-նահանգապետին ուղղված զեկույցում,— դեռ անցյալ տարի... Թիֆլիսում գտնված ժամանակ հանդիսանում էր «Իսկրայի» կազմակերպության ներկայացուցիչը, որը նպատակ ունենալով կազմակերպել ռազմահեղափոխական խմբեր, հարաբերություններ է հաստատել սպաների և հայտնի հեղափոխական գործիչների հետ, որոնք կապեր ունեն արտասահմանյան հեղափոխականների հետ» («Начало революционного движения в Туркмении в 1900—1905 гг.», кн. 2, с. 74)։ Տեքստում բերված փաստաթղթերը թույլ են տալիս ենթադրել, որ ամենուր խոսքը պրոֆեսիոնալ հեղափոխական Ա. Զուրաբովի մասին է, որն անձնական կապեր ուներ Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի հետ։

50 «История коммунистических организации Средней Азии», Ташкент. 1967, с. 54—55 (Ա. Զուրաբովը ՌՍԴԲԿ Տաշքենդի կազմակերպությունից կուսակցության IV համագումարի

ակումբում հանդես եկավ «Տնտեսական հարաբերությունների էվոլյուցիայի մասին» հրապարակային դասախոսությամբ։ Միջինասիական ժանդարմական ոստիկանության տեղեկությունների համաձայն «լեռնային ինստիտուտի ուսանող Զուրաբովը» եղել է 1907 թ. մայիսին Ասխաբադում լայնորեն տարածված հեղափոխական բովանդակությամբ թռուցիկների հեղինակը։ Ադմինիստրացիայի խոսքերով ասած, 1907 թ. հունիսին տեղի հեղափոխական խմբի դուխ կանգնած 11 մարդկանց շարքում հիշատակվում է նաև «ուսանող Զուրաբովը»։ Շուտով այդ ցուցակում հիշատակված համարյա բոլոր հեղափոխականները ձերբակալվեցին, սակայն Ա. Զուրաբովին հաջողվեց թաքնվել։ Նույն թվականի օգոստոսին Թուրքմենիստանի գեներալ-նահանգապետը խնդրեց ձեռք առնել ամենաեռանդուն միջոցները՝ բանտարկությունից խույս տված Ա. Զուրաբովին փնտրելու համար։ Ժանդարմական ոստիկանության տեղեկությունների համաձայն 1907 թ. սեպտեմբերին «ուսանող Զուրաբովը... նախագահել է մարզային կոմիտեի գաղտնի նիստերում[51] և օգտվելով որպես տեղական գիմնազիայի նախկին սանի Ասխաբադում ունեցած իր լայն ծանոթությունից, հատուկ ագիտացիա է մղել զինվորականների ջրջանում»[52]։

Զգաղարող բռնությունների, ձերբակալությունների և աքսորների հետևանքով Անդրկասպիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը թուլացավ։ Դա հանգեցրեց Անդրկասպիայի ազգայնական և մանրբուրժուական կազմակերպությունների ազդեցության ուժեղացմանը։ Ակտիվացավ էսէռների գործունեությունը, ուժեղացավ ազգայնական պրոպագանդան[53], Աշխուժացավ նաև հայ ազգային գործիչների գործունեությունը. 1905—1906 թթ. առաջացան դաշնակցության և հնչակյանների տեղական կազմակերպությունները[54]։ Նրանց գործունեությունն ուժեղացավ հատկապես 1907 թ. սկսած։ Կուսակցության համար միջոցներ հավաքելու նպատակով նրանք դիմում էին ահաբեկման և սպառնալիքի։ Օրինակ, 1907 թ. ապրիլին Մերվում ձերբակալվեց հայ ահաբեկիչ Ա. Աղամալյանցը, որին դաշնակցության գաղտնի ընկերությունը լիազորել էր բռնության սարսափի տակ դրամ կորզել հարուստ հայերից[55]։ 1907 թ. նոյեմբերին Մերվում լայնորեն տարածվեցին սպառնալի նամակներ, որոնցում հարուստներից դրամ էր պահանջվում[56]։ Հայկական ազգային կազմակերպություններ 1908 թ. գոյություն ունեին Ասխաբադում[57]։ Արխիվներում մեզ հաջողվեց հայտնաբերել փաստաթղթեր, որոնք վկայում են դաշնակցությանն առանձին հայերի պատկանելությունը նաև հետագա տարիներին[58]։

Ակտիվ էին գործում նաև հնչակյանները։ Բալասանյանցի հիշողությունների համաձայն 1906—1909 թթ. հնչակյանների ասխաբադյան կազմակերպության ղեկավարությունն իրագործվում էր Բաքվից՝ այդ կուսակցության Կենտկոմի անդամ Ֆ. Ֆարմազյանի (Մ. Սարգսյանց) կողմից։ 1908 թ. Ասխաբա-

---

պատգամավոր էր, առաջին համագումարի, որին մասնակցեց Թուրքմենիստանյան կազմակերպության ներկայացուցիչը (А. Рослянов. նշվ. աշխ., էջ 149)։

51 Խոսքը 1907 թ. փետրվարին ստեղծված ՌՍԴԲԿ մարզային կոմիտեի մասին է («Очерки истории коммунистической партии Туркменистана», с. 43—44):

52 «Асхабад», 21. III, 1906, с. 1, ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 184, թ. 24, գ. 269, թ. 9, գ. 274, թ. 12, գ. 274, թ. 107 և հակ.։

53 1907 թ. մայիսին էսէռները սպաներին միջինասիական երկաթուղու պետ գեներալ Ուլյանինին։ Առավել խոշոր ունեզրկումը 1908 թ. Զարջույի գանձատան կողոպուտն էր («Очерки истории Коммунистической партии Туркменистана», с. 51. «История Туркменской ССР», т. 1, кн. 2, с. 397): Պանիսլամիստական պրոպագանդայի մասին տե՛ս ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, թ. 2, գ. 16000։

54 «Очерки истории Коммунистической партии Туркменистана», с. 51.

55 ԹՍՍՀ ՊԿԱ, ֆ. Ի-1, ց. 2, գ. 262, թ. 1։

56 Նույն տեղում, գ. 251, թ. 4։

57 Նույն տեղում, գ. 865, թ. 230։

58 Նույն տեղում, գ. 858, թ. 23, գ. 865, թ. 330, գ. 915, թ. 171, 175 և այլն։

դում աշխատում էին հնչակյաններ Ե. Վարդանյանը, Ղ. Խաչատուրյանը, Կ. Մելքումովը, Կ. Սարդսյանցը և ուրիշներ[59]։

1910 թ. մարտի 22-ին Ասխաբադում ձերբակալվեց Կ. Սաֆարյանցը։ Նրանից բռնագրավված փաստաթղթերի ու նամակների հիման վրա պահնորդությունը պարզեց, որ նա հնչակյան կուսակցության լիազոր ներկայացուցիչն է Անդրկասպիայում, որտեղ պրոպագանդա էր մղում, այդ կուսակցության անդամներին մատակարարում էր դենք ու զինամթերք, կազմակերպել էր «Ե-բիտասարդ խմբի» բաժանմունք, որի մեջ էին մտնում Գ. Սաֆարյանցը, Գ. Ալխասյանցը, Թ. Խոսրովյանցը, Ս. Սարգսյանցը, Հ. Փանոսյանցը և ուրիշներ[60]։ Հեղափոխական նոր վերելքի տարիներին հնչակյանների մի մասը հարեց բոլշևիկներին[61]։

Հեղափոխական նոր վերելքի ժամանակաշրջանում Թուրքմենիստանում ուժեղացան բանվորական շարժումները, հուզումները զորքերում և թուրքմեն դեյխանության ելույթները[62]։ Այդ ժամանակ բոլշևիկյան ուժեղ խումբ կազմավորվեց Չելեքեն կղզու նավթահանքերում։ Բաքվի բոլշևիկների հետ սերտորեն կապված այդ խմբի մեջ էին մտնում Ի. Ֆիոլետովը, Ս. Ռեշտինը, Ն. Աղամալյանցը, Մ. Քալանթաճեն և ուրիշներ։ 1913—1914 թթ. այդ խմբին հաջողվեց նավթահանքերում մի շարք գործադուլներ կազմակերպել։ Այդ գործադուլների կազմակերպիչներից ու ակտիվ մասնակիցներից էին Գ. Գալուստյանցը, Գաբրիելյանցը և Ն. Աղամալյանցը։ Ասխաբադի սոցիալ-դեմոկրատներից հայտնի են Պետերբուրգի համալսարանի ուսանող Վ. Դավթյանցը և «Զակասպիյսկոյե օբազրենիե» թերթի էջկալ Ա. Ֆորմոզովը[63]։ Այդ ժամանակ Ասխաբադում ձևավորվում է «ՌՍԴ(բ)Կ խումբ՝ հանձին Ահարոնովի, Ժիտնիկովի, Ստեփանյանցի, Ս. Հարությունովի և ուրիշների», որին միանում են նախկին հնչակյաններ Ա. Եղիազարովը, Գ. Խաչատուրյանը, Ե. Վարդանյանը, Գ. Մելքումյանը և Ա. Աղայանը[64]։

Անդրկասպիայի հայերը հեղափոխական շարժմանն ակտիվորեն մասնակցում են նաև հետագա տարիներին՝ Փետրվարյան բուրժուադեմոկրատական և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում։ Սիմոնյանցը, Տոնիյանցը, Տեր-Մովսեսովը, Միրզախանովը և Առուշանյանցը 1917 թ. սեպտեմբերին մտան գործարանային բանվորների Մերվի սովետի գործկոմի կազմի, իսկ 1918 թ. մայիսին Ռ. Ղազարոսյանը, Մ. Տեր-Ստեփանյանցը, Գ. Խաչատուրյանը և Գ. Առուստամյանը՝ Ասխաբադի ժամանակավոր հեղափոխական կոմիտեի կազմի մեջ, որը ստեղծվել էր բանվորների, զինվորների, գյուղացիների և թուրքմեն պատգամավորների սովետների VII համագումարի կողմից՝ Ասխաբադի էսէռամենշևիկյան սովետի արձակումից հետո[65]։

Անդրկասպիայի հայ աշխատավորության առաջադեմ խավերն Անդրկասպիայի էսէռամենշևիկյան կառավարության դեմ հանդես էին գալիս ռուս բանվոր դասակարգի և թուրքմեն դեյխանության հետ համատեղ։ Իսկ հայ խոշոր և միջին առևտրական ու արդյունաբերական բուրժուազիան բացա-

---

59 «Революционное движение в Туркмении в 1908—1917 гг.», кн. 4, Ашхабад-Москва, 1946, с. 43.

60 Նույն տեղում, էջ 41—42։

61 Նույն տեղում, էջ 43։

62 «История Туркменской ССР», т. 1, кн. 2, с. 337—348.

63 «Революционное движение в Туркменистане в 1907—1917 гг.», Ашхабад, 1970, с. 187—189, 208—209, 212—213, 222—224, 226—228, 229—231, 235.

64 «Начало революционного движения в Туркмении в 1908—1917 гг.», кн. 4, с. 43—44.

65 Նույն տեղում, էջ 155, 182, 183, 197։

հայտորեն հարել էր հակահեղափոխության ճամբարին։ Այսպես «Համառուսական առևտրաարդյունաբերական միության» Ասխաբադի կոմիտեի 1917 թ. մարտի 31-ի նիստում, որն ընթացավ հայազգի Յա. Սարգիսբեկովի նախագահությամբ, շարադրվեց ժամանակավոր կառավարությանը պաշտպանող և դասակարգային հաշտություն քարոզող ծրագիր[66]։ Այդ ժամանակաշրջանում վերջնականապես ռեակցիայի ճամբարը գլորվեցին հայ բուրժուական գործիչները և էսէռների կուսակցության անդամները[67]։ «Մենք», պրոլետարներս,— գրել է Վ. Ի. Լենինն ազգային հարցում բուրժուազիայի տակտիկայի մասին,— տասնյակ անգամ տեսել ենք, թե ինչպես բուրժուազիան դավաճանում է ազատության, հայրենիքի, լեզվի և ազգի շահերին, երբ նրա դեմ կանգնում է հեղափոխական պրոլետարիատը»[68]։

Այսպիսով, Անդրկասպիայի հայ բնակչությունն ակտիվ մասնակցություն ունեցավ մարզի հասարակական-քաղաքական կյանքին։ Նրա հասարակական-քաղաքական և մշակութային զարգացումը սերտորեն կապված էր ինչպես բնիկ թուրքմեն, այնպես էլ եկվոր ռուս, պարսիկ, ադրբեջանցի և այլ բնակչության տնտեսական, մշակութային ու քաղաքական զարգացման հետ։

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ АРМЯН В ЗАКАСПИЙСКОМ КРАЕ (1881—1917)

ВЛАДИМИР ГРИГОРЬЯНЦ

Резюме

Армянское население Закаспия принимало активное участие в общественно-политической жизни области. Сохраняя свой национальный облик и образ жизни, традиции и обычаи, быт и нравы не утратив своих связей с родиной, оно вместе с русским, туркменским, азербайджанским и прочим населением участвовало в формировании межнациональных общественных связей, сыграв по существу роль посредника в процессе преодоления национальных, культурно-исторических, религиозных и прочих барьеров, разделявших европейское и мусульманское население области. Трудящиеся слои армянского населения вместе с русским железнодорожным пролетариатом и туркменским дайханством активно участвовали в революционном движении.

---

66 «Асхабад», 22. IV. 1917, с. 4.

67 «История Туркменской ССР», т. 2, Ашхабад, 1957, с. 95—96.

68 Վ. Ի. Լենին, նույն, հ. 7, էջ 304։